ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Ապրիլի 30-ից մայիսի 5-ը Ֆինլանդիայի Նոր Վալամո վանական համալիրում տեղի ունեցավ «Ուղղափառ Դիակոնիա. Ուղղափառ Եկեղեցու սոցիալական վկայությունը և ծառայությունը» խորագրով Ուղղափառ Եկեղեցիների սոցիալական և հումանիտար կազմակերպությունների առաջին միջազգային համաժողովը, որին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուց մասնակցում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչակազմակերպական գործերի կառավարիչ Տ. Փառեն եպս. Ավետիքյանը: Հայաստանից ներկա էր նաև Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան հիմնադրամի գործադիր տնօրեն Կարեն Նազարյանը:

Կոնֆերանսը, որին մասնակցում էին 25-ից ավելի Ուղղափառ Եկեղեցիների շուրջ 80 ներկայացուցիչներ, նպատակ ուներ քննելու Եկեղեցիների սոցիալական ոլորտում կատարած աշխատանքներն ու ձեռքբերումները, ինչպես նաև համագործակցության նոր ուղիներ փնտրել՝ առկա դժվարություններն ու խոչընդոտները միասնաբար հաղթահարելու համար:

Այս խնդիրների վերաբերյալ զեկույցով հանդես եկավ նաև Փառեն Սրբազանը՝ անդրադառնալով Հայ Եկեղեցու պատմական հարուստ անցյալին, ներկա վիճակին ու արդի մարտահրավերներին:

Կարևորելով քրիստոնեական Եկեղեցիների դերը հասարակության սոցիալական կյանքում՝ կոնֆերանսին իրենց օրհնությունն էին հղել նաև Ուղղափառ Եկեղեցիների առաջնորդները: